Սեղանին նախագահում էր տեսքոտ ու բարձրահասակ տանտիկինը, ծագումով սիբիրուհի: Նա արդէն վաղուց էր ապրում Ճապոնում եւ ծառաների հետ բոլորովին ազատ խօսում էր ճապոներէն:

Սեղանակիցները բացառապէս ռուսներ էին, որոնք ոչ մի կերպ չէին կարողացել ընտելանալ անգլիական կերակուրներին, քանի որ շոգենաւներում ամեն տեղ ճաշը անգլիական է, եւ հիմա բոլոր սրտով ուրախ էին, որ վերստին սեղանի վրա տեսնելու են ռուսական կաշան ու շչին:

Խօսակցութիւնը բնականաբար դառնում էր գլխավորապէս Ճապոնի շուրջը:

Տանտիկինը բացատրում էր իր տեսութիւնները ճապոնացիների մասին, ասում էր, թէ նրանք խիստ փափկանկատ են եւ ծիծաղելի դառնալու չափ քաշւող են փողային հարցերում:

—Գալիս է օրինակ մի արհեստաւոր կամ բանւոր վարձը ստանալու. փոխանակ ուղղակի իր գալու նպատակը յայտնելու, նա քաշքշւում է, հազում:— Ի՞նչ ես ուզում, հարցնում ես զարմացած: Պատասխան՝ ոչ մի բառ: Նա միայն ոտից ոտ է անցնում, ու լսւում է նրա թեթեւ չոր հազը, մինչեւ որ նրա դէմքին դրոշմւած չփոթութիւնից, վերջապէս գլխի ես ընկնում, թէ բանն ինչումն է:

Երբ սեղանից ելանք, դուրսն արդէն կիսով չափ մութն էր: Փափուկ ջերմ գիշերը իջնում էր Նագասակիի վրա եւ շուտով բոլորովին պարուրեց ամբողջ քաղաքը:

Բայց մինչեւ ուշ գիշեր կեանքը չէր դադարում փողոցներում: Շարունակ փայլկտում ու արագ անց են կենում վազող ջիների թղթէ լապտերները. հեռուից լսւում են օտարազգի հարբած նաւաստիների խռպոտ ձայները եւ